№ 6 ԹԵՀՐԱՆ ՇԱԲԱԹ 3 ՓԵՏՐՎԱՐԻ 1894 ԹՒԻ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

# ՇԱՒԻՂ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

„ՇԱՒԻՂԸ“ ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» Տարեկան գինը 10 ղրան, կէս տարուանը 6 ղրան: Առանձին համարները 5 շահի: Արտասահմանում տարեկան 8 ֆրանկ, Ռուսաստանում 3 րուբլի, կէս տարուանը 5 ֆր. — կամ 2 րուբլի: Թղթակցութիւնները գրւում են միմիայն խմբագրութեան մէջ: Մեր հասցէն. Téhéran Rédaction CHAVIGH

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է առաւօտեան 8—4 ժամը, Կիւրակէ օրերը 10—12 ժամը: Յայտարարութիւն ընդունւում է ամեն Յայտարարութիւնների համար վճարում են բառին քաղաքն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արծաթի անկումը. Նամակ Թաւրիզից. Նամակ Սալմաստից. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Անգլիական նաւատորմը Միջերկրական ծովի վերայ. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲՈՐՍԱ.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԱՐԾԱԹԻ ԱՆԿՈՒՄԸ

—

Ամեն մարդ գիտէ, որ վերջին մի քանի ամսուայ ընթացքում ինչ ահագին անկում յանկարծ ունեցաւ արծաթի գինը մեզ: Մենք կուզէինք մի քանի խօսքով բացատրել դորա պատճառները հասկանալի լեզուով այն մարդկանց, որ չը գիտեն թէ ինչն է ստիպել վերագրել այդ փոփոխութիւնը:

Նախքան առաջ պէտք է իմանալ, որ արծաթը շատ աւելի առատ է քանակութեամբ, քան թէ մարդկութեան ոսկու հետ իւր ունեցած նախկին համեմատութիւնը պահպանելու համար: Այս խորհուրդը ընդունած էին նոքա այն էր որ արծաթի գինը պիտի իջնէր, եւ եթէ մինչեւ մի քանի ամիս առաջ դեռ արծաթը մասամբ պահում էր մի բարձր արժէք, այդ նորա համար էր որ Եւրոպայում եւ մանաւանդ Միացեալ Նահանգում դեռ մարդիկ աշխատում էին արհեստական կերպով արծաթի գինը բարձր պահել, զոր օրինակ Ամերիկայի Միացեալ Նահանգների մէջ կար մի օրէնք, Շէրմանի Ակտ անունով որի զօրութեամբ կառավարութիւնը պարտաւորած էր տարեկան մի որոշ քանակութեամբ արծաթ, բարձր արժէքով գնել եւ ամբարել որպէս զի արծաթի արժէքը չ'իջնի:

Մօտաւորապէս եօթը ամիս առաջ Հնդկաստանի արծաթի հանքերը 8-ը ամիսով փակւեցան, որի պատճառն այն էր, Հնդկաստանի դրամատներն մէջ զարկած դրամ խնդրը Անգլիական կառավարութեան ձեռքից առնւեցաւ: Երբ երկրորդ անգամ Միացեալ-Նահանգների ամենակարող գահակալի յաջողուեցաւ Շէրմանի Ակտը ջնջել եւ այդ եւս մի արծաթ չը գնել կառավարութեան կողմից, մի նոր անկում եւս ունեցաւ արծաթը, եւ այն ժամանակուանից անդադար իջնում է մինչեւ այսօր:

Արծաթի այս յաղթական փաստը նախատեսուած էր տնտեսագէտների կողմից, եւ ինչ դորա մասին Եւրոպայի կառավարութիւնները միայն ոսկին ընդունեցին իբրեւ դրամ, մինչդեռ որ Եւրոպա

Մի նոյնքան մեծ նշանակութիւն չունի որ արծաթի արժէքն ինչ է, քանի որ ամէն դէպքում էլ մեր մանրավաճառական մեծ ու փոքր կալուածների համար գործը միայն արծաթ է, անտարակոյս մեծ կորուստ կայ այդ մեծ արժէքի պակասութեան մէջ:

Տասնեակներ առաջ որ ոսկի կամ սորանից առաջ միայն 36 ղրան արժէք ունէր այժմ 50 ղրանով է գնւում շուկայի մէջ, եւ մենք մտածում ենք որ արծաթի դրամի արժէքը դեռ էլ պէտք է իջնէ քանի որ դորա յառաջն առնելու համար միջոցներ չը գտնուին:

Ց. Զ. Մ.

### ՆԱՄԱԿ ԹԱՒՐԻԶԻՑ

—

23 յունվարի 1894

1894 յունվարի երկուսին ժամանեց Թաւրիզ, Ատրպատականի թեմի առաջնորդ, Ստեփաննոս արքեպիսկոպոս Մարգարեանցը:

Ընդառաջելեր, Թաւրիզի ամբողջ Հայ հասարակութիւնը, թէ ձիով եւ թէ ոտով, մինչեւ Աջի չայը, որը հեռու է քաղաքից մի ժամ հեռաւորութեան վերայ, իսկ քանի ականաւորանձինք գնացել էին մինչեւ Սոֆիան: Քաղաքի մէջ, Նորին սրբազնութիւնը համբոյր, հանդարտ, եկեղեցու փողոցի մուտքում, սպասում էր Արամեան դպրոցի երգեցիկ խումբը շապիկներ հագած, խաչվառով եւ քշոցներով, Նորին սրբազնութիւնը հանդիսով պէս, Սուրբ Աստուածածին Զուարթնոց ... շարականը, Նորին սրբազնութիւնը այդտեղ շրջապատուած, ծածկեց եւ խաչք առաւ ձեռքը, երկու կողմերց շուրջառներով գնում էին Թաւրիզի քահանաները. Նորին սրբազնութիւնը խաչակնքում էր աջ եւ ձախ:

Երբ հասաւ եկեղեցու դուռը, երգեցիկ խումբը սկսեց Խորհուրդ խորին ի հօրն շարականը. եկեղեցու մուտքում շարուած էին, Թաւրիզի Արամեան եւ Հայկազեան դպրոցների սաները եւ ծառուհիները:

Նորին սրբազնութիւնը մտնելով եկեղեցի, սկսեց երեկոյեան ժամերգութիւնը որից յետոյ բարձրացաւ բեմ եւ խօսեց մի սրտառուչ քարոզ, այնպէս որ երբ Նորին սրբազնութիւնը դուրս եկաւ եկեղեցուց. ժողովուրդը օդը գլխարկներ նետելով:

Նորին սրբազնութիւնը երբ մտաւ առաջնորդարանի բակը. Արամեան դպրոցի սանուհիները, ձեռնհաւորեցին Նորին սրբազնութեան բարի գալուստը միաձայն, որից յետոյ սկսեցին երգել Բարեկենդան երգը, իրենց տեսչի առաջնորդութեամբ, մինչեւ երգի վերջանալը սպասեց Նորին սրբազնութիւնը յետոյ բարձրացաւ առաջնորդարան:

Առաջնորդարանի դահլիճում պատրաստուած էր սեղան Նորին սրբազնութեան համար, պատուելի վերջացնելով որը պատարագելու պատճառով, Նորին սրբազնութիւնը այդ երեկոյ նստեց մի քանի տեղացիների եւ հոգաբարձուների հետ:

Չը մոռանամ յիշելու որ բոլոր տեղական կառավարչական պաշտօնէութիւններից եւ հիւպատոսներից ուղարկուած էին կառքեր եւ եղեկներ, որոնց Նորին սրբազնութիւնը չը մտաւ թէ քաղաքի ժամանակ շնորհակալութիւնը յայտնեց:

Երկրորդ օրը, Նորին սրբազնութիւնը սկսեց ընդունել պաշտօնական այցելութիւններ, նոյն օրը ներկայացան Նորին սրբազնութեան, դպրոցների հոգաբարձուները իրենց ուսուցիչների վարժուհիների հետ:

Չորեքշաբթի հանդէսը կատարեց Նորին սրբազնութիւնը, որի ժամանակ ժողովուրդ էր պատարագ լսել, քացի հայերից կային շատ աւետարանականներ եւ կաթոլիկ հաւատացեալներ իւր մարդկանցով:

Հանդէսից յետոյ խօսեց Ծննդեան եւ Մկրտութեան մասին, բացատրելով տօնի նշանակութիւնը, եւ թէ ինչու հայերը կատարում են Ծնունդը եւ Մկրտու-

թիւնը միասին։

Հանդէսից յետոյ, օրհնեց Թաւրիզի նախկին առաջնորդ Ստեփանոս եպիսկոպոս Մխիթարեանի գերեզմանը, որը թաղուած է եկեղեցու գաւթում։

Այս բոլորից յետոյ ժողովուրդը դիմեց առաջնորդարան Նորին սրբազնութեան, Ծնունդ և Մկրտութիւնը շնորհաւորելու, որոնց հետ էր ռուսաց հիւպատոսը։

Նորին սրբազնութիւնը զգեստները հանելուց յետոյ բարձրացաւ առաջնորդարանի դահլիճը, այդ ժամանակ մօտեցաւ և շնորհաւորեց Նորին սրբազնութեան Ծնունդ և Մկրտութիւնը ռուսաց հիւպատոսը, որին հետևեցին ժողովուրդը.—ժողովուրդի համար պատրաստուած էր շքեղ սեղան։

Խաչի փոխ օրը Նորին սրբազնութիւնը պատարագեց Լիլաւայի ս. Սարգիս եկեղեցում, և կատարեց պ. Արշակ Նազարբէկեանի թաղման արարողութիւնը քահանաների հետ. եկեղեցում մի սրտառուչ քարոզ խօսեց։ Պ. Արշակ Նազարբէկեանը մեռել էր Սօվուջբուլաղում, թունաւորուելով իւր հակառակորդ քիւրդից, որից շատ մեծ պահանջ ունէր պ. Ա. Նազարբէկեանը։

Պ. Ա. Նազարբէկեանը վարում էր ռուսաց փոխ հիւպատոսութիւն Սօվուջբուլաղում։

Թաղմանը ներկայ էին Թաւրիզի ամբողջ հայ հասարակութիւնը, եւրոպացիներ և հիւպատոսների ներկայացուցիչները։

Դագաղի վերայ դրուած էր երկու պսակ։

Յունվարի 9-ին Թաւրիզի Լիլաւայ թաղի դպրոցների դահլիճում, Թաւրիզի հայուհեաց ընկերութիւնը, տուեց մանկական երեկոյթ և տօնածառ։

Երեկոյթի ժամանակ երգում էին, սաները և սանուհիները, նոյն դպրոցի երեխաների համար մուտքը նշանակուած էր մի ղռան բեկ ծնողների համար երկու ղռան։

Երեխաները ստանում էին միրգ, տոպրակներով, և մտնում աշակերտական վիճակախաղի տոմսակ հանողներին և տանում էին միմի նուէրներ։ Ծնողների համար էլ կար վիճակախաղ, տոմսակները սպառուեցաւ հէնց նոյն գիշերը շնորհիւ դպրոցի հոգաբարձուների, ներկայ էր Նորին սրբազնութիւնը, որին հրաւիրել էր ընկերութիւնը, վերջացնելով նամակս, մաղթում եմ Նորին սրբազնութեան յաջողութիւն իւր բոլոր գործերի համար։

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թէհրան, 28 յունվարի 1894

Ձեր չորրորդ թւում «մի քանի խօսք մարմնական պատիժների մասին՝ Պարսկաստանի ուսումնարաններում» վերնագրով յօդուածը, մի հարց է, որ վաղ թէ ուշ պիտի բարձրանար. ուրախ եմ որ այսպէս վաղ յարուցուեցաւ խնդիրը. թէեւ Պարսկաստանում էլ այն ուսումնարաններից այլ եւս չկան որ դագանակ գործածող ուսուցիչներին քաջալերեն, եւ շատերին կը թուի թէ այդ սխալ ուղղութեան դէմ խօսելն աւելորդ է, բայց ես մտածում եմ որ խօսել մի վնասակար սովորութեան դէմ, որի սխալը ընդունուած է ընդհանրապէս, այնու ամենայնիւ անօգուտ չի մնայ. բացի սորանից մի ուրիշ պատճառ եւս կայ որ այսպիսի խնդիրների վերայ խօսելը «Շաւիղի» մէջ անհրաժեշտ է դարձնում. մեր ուսուցիչները չունին այն միջոցներն, որոնք Կովկասի հայերն ունեն մանկավարժութիւն ուսումնասիրելու համար, նրանց կարող է օգնել «Շաւիղը» թոյլ տալով այնպիսի անձանց, որոնք մանկավարժութեան մեթոդներին ծանօթ են՝ ընդունուած միջոցները այս մասնագիտութեան վերաբերմամբ հրատարակել իւր էջերում: Պ. յօդուածագիրը պարզ եղանակով եւ լաւ նկարագրութեամբ մեզ բացատրում է ուսումնարաններում գործ դրուած մարմնական պատիժների չար հետեւանքը: Խնդրեմ թոյլ տաք մի քանի խօսք էլ ես ասեմ մի նոյնպիսի խնդրի մասին, որը դեռ եւս մեր մէջ յարուցուած չէ. այսինքն, մարմնական պատիժներն եւ պատուի զգացման ոչնչացնելը մեր տներում: Մենք պէտք է խոստովանուինք, որ մեր տներումը (շատ փոքր բացառութեամբ) մենք աւելի դժուարութեամբ չենք վարւում մեր երեխայոց հետ քան թէ ուսուցիչը ուսումնարանում, չեմ չափազանցել եթէ ասեմ թէ, ծնողների անգթաբար պատժելն իրանց երեխաներին աւելի վատ հետեւանքներ ունի քան թէ ուսուցչի մի այդպիսի վարմունքը, պատճառը այնքան յայտնի է, որ չը պէտք է աշխատեմ ապացուցանել՝ երկարօրէն: Մի ուրիշ պակասութիւն էլ կարելի է նկատել ծնողաց եւ երախայոց յարաբերութեանց մէջ—հայհոյանքի առատ հոսանքը: Դորա վտանգները զուտ բարոյական են եւ հէնց այս պատճառով էլ աւելի մի պարսաւելի պակասութիւն է մի ծնողի կողմից: Մարմնական պատիժը եւ հայհոյանքը պատուի զգացումը ոչնչացնում են եւ ինչ յատկութիւն, որ բարի է եւ ազնիւ մարդուս մէջ խլում են, երեխայից: Ամէն բանում մենք փորձում ենք օրինակել եւրոպացիներին, ինչու չը հետեւենք նորանց այս դէպքում եւս. շատ միջոցներ կան որոնց օգնութեամբը մի հայր կարող է իւր երեխային ուղիղ շաւղի վերայ դնել. ինչու այս մեղմ միջոցները թողնենք եւ դիմենք անգթաբար փայտին եւ հայհոյանքին: Ամէն ծնող պէտք է մի կանոնաւորութիւն դնէ իւր երեխայի եւ իւր անասունի մէջ: Ընթերցողներիս յայտնի կը լինի որ մինչեւ անգամ անասունների դէմ անգթութիւնը անպատիժ չէ մնում Եւրոպայում:

X.

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Յունվարի 23-ին կարդացուեցաւ Թաւրիզի եկեղեցիներում, Նորին Վեհափառութեան, Հայրիկի անդրանիկ կոնդակը։

—

Լսում ենք շնորհիւ Թաւրիզի կիւրակնօրեայ դպրոցի վարչութեան թուլութեանը, Թաւրիզի կիւրակնօրեայ դպրոցը փակվելու վերայ է։

—

Ինչպէս հաղորդում է մեր թղթակիցը Ղարադաղում (փայտակարան), նախաձեռնութեամբ պ. Գասպար Սարգսեանի բացուել է ուսումնարան, պ. Ս. արհեստով դերձակ է վճարում է. ուսուցչին մինակ իւր կողմից քսան թուման, իսկ 70 տուն Աղաղանը որի մէջ է դպրոցը վճարում է մնացեալ 20 թումանը. ուսումնարանը միակն է Ղարադաղում։

—

Ջայն կայ իբր թէ Եղբարք Թումանեանները մտադիր են իւրեանց ծննդավայր, Ողան գիւղում ուսումնարան բացելու, որի հողը իւրեանց սեփականութիւնն է։

—

Դիֆթերիտի նշաններ Թաւրիզումն էլ է երևում, չէ բաւականացել անցեալ տարի հոկտեմբերի 10-ին արած զոհերով, որի պատճառաւ 15 օր ուսումնարանները փակուեցաւ։

—

Ուրախութեամբ լսումենք, որ Նոր-Ջուղայում, թեմիս սրբազան առաջնորդի սեպհական ծախսով մի օրիորդաց դպրոցի մի նոր շէնք է կառուցւում։ Անկեղծ սրտով շնորհաւորում ենք, Նորին սրբազնութեան, այդ ազգօգուտ ձեռնարկութիւնը։

—

Լսում ենք որ նոյն քաղաքում մի ընթեցարան էլ է հիմնուում։

—

Հաստատ աղբիւրներից տեղեկանում ենք, որ բոլորովին սուտ է, մեր երրորդ թւին հաղորդուած այն լուրը, թէ Խոշտի ճանապարհի վերայ Նազլաւարի մօտ մի հայի դիակ է գտնուել։

—

Խնդրւում է մեր Ռուսահայ բաժանորդներից, որ իրանց բաժանորդագնի հետ եղած նամակից ի զատ, մի առանձին նամակով ևս յայտնէին իւրեանց հասցէները, որ կարողանայինք „Շաւիղ“ թուերը ուղարկել. որովհետև շատ երկար է տեւում մինչև որ Ջուլֆայից ստանումենք փող ու նամակը, որով և թերթի ուղարկուելը բաւականին ուշանում է։

—

Ներկայ թուի յունվարի 3-ին քուէների առաւելութեամբ, ռուսահպատակ հայ վաճառականների պետ է ընտրուել, աղա Սէթ Պ. Ներսէսեանը։

Հաստատ աղբիւրներից լսում ենք, որ Սըլտանի կայսերական պանքի տընօրէնի եւ հայ գործակատարների մէջ անհամաձայնութիւն է ծագել: Տնօրէնը պահանջում է, որ կիրակի օրերն էլ աշխատեն իսկ հայերը չեն համաձայնել և հրաժարական են տուել, երկու կողմից էլ դիմել են Թեհրան, ընդհանուր տընօրէնին: Մէկ ժամանակ Օրիանդալ բանկից սկսած բայց, կիրակին, ուրբաթ օրն էլ էր արձակուրդ, մինչ դեռ վերջերս ուրբաթը խլեցին: Բայց մենք չենք կարծում, որ այդ տեսակ կարգադրութիւնը ընդունի ընդհանուր տնօրէնը, որ շաբաթական մէկ օր արձակուրդը, այն էլ կիրակին, խլուի հայ գործակատարներից:

—

Թէհրանի բրիտանական դեսպան սըր Ֆրանք-Լասէլզ, անցեալ երեքշաբթի մեկնեցաւ Լոնդոն, առժամանակեայ արձակուրդով, և տիկին Լասէլզ, դեսպանուհին էլ կը մեկնի իւր ամուսնոյն հետեւելու, մի քանի օրից յետոյ:

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԱՆԳԼԻԱԿԱՆ ՆԱՒԱՏՈՐՄԸ ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ ԾՈՎԻ ՎԵՐԱՑ

—

Այն ժամանակուանից, որ անգլիացիք. ձեռք են բերել ծովի վերայ անվիճելի նախապատուութիւն, Ֆրանսիական նաւատորմը միշտ նկատուել է որպէս երկրորդը. հետեւաբար, երբ վերջերս, ռուս-ֆրանսական դաշնակցութեան շընորհիւ, այդ արդէն հզօր Ֆրանսիական նաւատորմի վերայ բարդուել է և ռուսաց ծովային ոյժը, անգլիացիների մէջ սկսել է մի յուզմունք տեղի ունենալ, մանաւանդ որ, վերջին տարիների ընթացքում, ռուսները արտաքոյ կարգի ուշադրութիւն են դարձրել իրենց նաւատորմի վերայ իսկ անգլիացիք ընդհակառակը, նոյնչափ գրահաւորներ չեն աւելացրել իրենց ծովային ոյժում, որչափ սովորաբար և վտանգի բացակայութեան ժամանակ անում էին:

Խօսք չը կայ, որ անգլիական ծովային ոյժը, այս րոպէին վեր է Ֆրանսիական և ռուսական միացեալ ծովային ոյժերից, բայց արդեօք այդ առաւելութիւնը այնչափ կայ, որ անգլիացիներին թոյլ տայ հանգիստ իրենց տեղը նստել և բոլորովին վստահ լինել իրենց վերայ, ահա այն հարցը, որ այսօր զբաղեցնում է անգլիական մամուլը: Անգլիան մինչև այսօր վայելած է, ծովային առաջին զօրութիւնը ունենալու համբաւը, բայց այդ համբաւը պարտական է միայն իւր գրահաւորներին, և այն րոպէին երբ որ և է պետութիւն կամ պետութիւններ տեսնեն, որ կարող են չափուել նորա հետ ծովի վերայ առանց յաղթուելու, հաւանական է, որ այն րոպէին մեծ վըտանգի պէտք է ենթարկուի անգլիական քաղաքական և առեւտրական շահերը:

## ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Նորին Վեհափառութեան ամենայն հայոց Կաթուղիկոսի կարգադրութեամբ, Էջմիածնում հրատարակուող „Արարատ“ ամսաթերթը, այսուհետև լոյս կը տեսնի ամիսը երկու անգամ:

—„Մշակը“ հաղորդում է, որ օրերումս տիկին Մ. Դ. Պօպովեանը, յանձնեց Կովկասի Հայոց Բարեգործական ընկերութեան 2000 րուբլի, որ այդ գումարով կառուցանէ մի շինութիւն, Ցխինվալ գիւղի հայոց ուսումնարանի համար:

(Нов. Об:)

—Լոնդոնից հեռագրում են, որ Սիեռա-Լիոնից եկած պաշտօնական հեռագիրներներից յայտնուում է, որ մի նոր ընդհարում է տեղի ունեցել անգլիացիների և Ֆրանսիացիների զօրքերի մէջ. և երկու կողմից էլ շատեր սպանուել են: Ոչ մի թուական կամ տեղի անունն յիշուած չէ, և կառավարութիւնը մանրամասնութիւններ է խնդրել Սիեռա-Լիոնի կառավարչապետից, Ֆրանսիացիները բարձրացրել են իրենց դրօշակը Բոմալէյի մէջ, Լիբէրեայի սահմաններում:

—Ինչպէս „Մշակը“ հաղորդում է, Էջմիածնի վանքի շտեմարանի մէջ ոչ կարգ կայ ոչ հաշիւ, ոչ կանտրոլ: Այժմ մտադրութիւն կայ, վանքի ծախսարարութիւնը յանձնել չորս հոգուց բաղկացած մի խմբի. ինչ անձիք կը նշանակուին այս խմբի մէջ—ահա միաբանութիւնը զբաղեցնող հարցը, որովհետև ծախսարարութեան և շտեմարանի գործում պէտք է լինեն անպայման օրինաւոր մարդիկ, ապա թէ ոչ եղածի առանձնբորդ մասը անգամ չի մնայ:

—„Մշակը“ ինչպէս հաղորդում է, Նոր տարվայ օրը, ճեմարանի աշակերտները իրանց ուսուցիչներով ներկայացան Վեհափառ Կաթողիկոսին. իւր խօսքը ուղղելով ուսանողներին. Վեհափառն ասաց. „Մեր ուսումնարանները վարժապետի կարօտ են, դուք պէտք է երթաք վարժապետ ըլլաք. մեր հոգևորականները տգէտ են, դուք հոգևորականներ ալ պիտի ըլլաք“: Նոյն օրը վանականները եւս գնացին վեհարան՝ շնորհաւորութեան: Վեհափառը ամեն մէկին ընծայեց մի—մի օրացոյց և „Հրաւիրակ Աւետեաց երկրին“:

—„Մշակ“ լրագրից քաղում ենք հետեւեալը. Կ. Պոլսի „Արեւելք“ լրագիրը գրում է. „Թիֆլիզէն կը հաղորդեն, որ Կաթողիկոսը մտադիր է յառաջիկայ Զատկին Բագու ուղեւորվելու“: Որպէսզի բագուեցիները իրարանցումի մէջ չը ընկնեն, հարկաւոր ենք համարում ասել, որ „Արեւելքի“ այդ լուրը նոյնքան հիմք ունի, ինչքան նրա միւս լուրերը, —այսինքն ոչինչ հիմք:

—Չիկագօի ցուցահանդէսը հրդեհով վերջացաւ, որից սաստիկ վնասվեց ցուցահանդէսի Ֆրանսիական բաժինը, ուր դրված էին թանկագին գօբէլէններ, սէվրեան ֆարֆօր և այլն:

—Աֆրիկայի արեւմտեան ծովեզերքի վերջին լուրերը յայտնում են, որ Դահոմէյի թագաւորը անձնատուր է եղել Ֆրանսիացիներին:

—Փարիզից հաղորդում են, Վայյանտ որ ռումբ էր ձգել պատգամաւորների սենեակը, այսօր գլխատուեցաւ. մինչեւ վերջին րոպէն նա պատում էր մահ դատապարտութեան, եւ կեցցէ անիշխանութիւնը:

—Մադրիդից հաղորդում են, որ այն փոխադարձական դաշնագրի համաձայն, որ կնքուել է Ռուսաստանի եւ Գերմանիայի մէջ, Գերմանիայի ցորենի եւ նաւթի մաքսերը պակասեցրել է: Վիլհելմ կայսրը նախարարների մի հացկերոյթի ժամանակ պնդում է դաշնագրի վաւերացման վերայ, ապա ոչ առեւ նա մաքսային պատերազմը պէտք է փոխուէր իսկական պատերազմի:

—Դանզիբէրից եկած լուրերից քաղում ենք, որ Խէգկեր, նախկին պատերազմական փոխ-քարտուղարին, Մէնէր փաշային, շնորհել է Օսմանիէյի շքանշանը եւ նրան յանձնել է մի ուրիշ պաշտօն:

—Լոնդոնից հաղորդում են, որ Ստանդարդի Շանխայի թղթակցի հաղորդած լուրին, (թէ Ռուսիա եւ Չինաստան կնքել են մի ծածուկ դաշնագիր,) Պետերբուրգի մէջ հաւատ չէ ընծայւում: Սիէռա Լիօնից եկած հեռագիրը կրկնում է, որ Ֆրանսացիները նորից յարձակուել են Անգլիացիների վերայ եւ սպանել են սահմանապահներից հինգին, Ֆրանսիացիներից սպանուել է 3 հոգի:

—Վաղարշապատից «Մշակին» գրում են: «Դեկտեմբերի 26-ին, կիրակի օր, Դուռեան եպիսկոպոսը իւրեան ունեցաւ գիւղի եկեղեցում չորս տիրացու միանգամից ձեռնադրել, Երեւանեան նահանգի զանազան գիւղերի համար: Չորս նորընծաներն էլ այնքան տգէտ են, որքան եւ դրանց ձեռնադրութեան համար վեհարանի պատերի տակ թափված գիւղացիք, այնպէս որ սրանց ձեռնադրվելը մեզ համար մինչեւ այժմ մնացել է հանելուկ: Արդեօք պատճառը գիւղերում քահանաներ չունենալն է. բայց դա անկարելի է, քանի որ շատ լաւ յայտնի է, որ նորընծաներից մի քանիսի հօրը առանց այն էլ հովիւ ունի: Իսկ Լ.Թէ յիրաւի այդ գիւղերում չը կան քահանաներ: Տասնեակ գիւղերում

կան, որոնց 50 տոկոսը վճարւում է 1—2, մինչեւ իսկ Թուրքիան, եւ ամենեւին զեռ չէր դրանց փոխառութեան տոկոսները, քանի որ իր ծանրաբեռնւածութիւնը աւելի մեծ էր դրանցից. մինչդեռ թէ ոչ լուսաւորւած երկրներ [illegible] մինչ [illegible] կը հասնեն:

—Անգլիերէն „Գրաֆիկ“ թերթից քաղուածներ հետեւեալը, ըստ դոքտոր Ֆալբի յայտնի գերմանացի եղանակ գուշակողի, աշխարհի վախճանը տեղի պիտի ունենայ 1899 թիւ Նոյեմբերի 13-ին: Նա ասում է որ 1866-ի գիսաւոր աստղը նորից պիտի երեւայ 1899-ին եւ ընդհարուելով մեր գնտի հետ պիտի կործանէ նորան: Ում որ այս նախագուշակութիւնը երկիւղ է պատճառում, թող մխիթարուի յիշելով, որ նոյն դոքտորը անցեալ տարի գուշակեց, որ ամառը շատ անձրեւային պիտի լինի եւ ընդհակառակը շատ տարիներից ի վեր չտեսնուած չոր եղաւ այդ եղանակը:

## ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Լոնդոն, փետրվար 7|26 յունվարի: Ֆրանսիական եւ անգլիական մամուլները ցնւում են այն ընդհարումների վերայ, որ տեղի են ունեցած երկու տէրութեան զօրքերի մէջ Աֆրիկայում, եւ պնդում են թէ, պէտք է հարկաւոր եղածն անել ապագայի փոխադարձ դէպքերի առաջն առնելու համար:

Փարիզ, փետրվար 9|28 յունվարի: Ժուռնալ դէ Դէբա հրատարակում է Սեն-Լուիզից եկած հեռագիրը, որից յայտնւում է թէ Ֆրանսիական զօրամասը որ յանկարծակի յարձակեցաւ, գնդապետ Բոննիէրի հրամանատարութեան ներքոյ գտնուած զօրքերի մի մասն էր, նոքա բոլորն էլ կոտորուեցան, եւ թէ բաւական զօրք կայ Տիմբուքտուի մէջ:

Փարիզ, փետրվար 10|29 յունվարի: Սէն Կազիմիր Պերիէրը պատգամաւորների ժողովում յայտնեց, որ կառավարութիւնը ստացել է հարկաւոր եռանդուն զօրքեր ուղարկելու Տիմբուքտու, որ պէտք է գրաւուած մնայ Ֆրանսիայի կողմից: Ֆրանսիան, նա աւելացնում է, չէ կարող յետ քաշուել այն դժբաղդութիւնից յետոյ որ պատահեց նորա զօրքերին Տիմբուքտուի մօտ:

Լոնդոն, փետրվար 11|30 յունվարի: Գլադստոնը, երէկ երեկոյ Բիարիցից հասաւ Լոնդոն: Բրիւսելի մէջ կայացել վերայ է մի դաշնակցութիւն, որ պիտի պարունակէ Ֆրանսիան, Բելճիքան եւ Հոլանդիան, դրամական խնդիրները կարգադրելու, եւ միջազգային համաձայնութեան կայացնելու, արծաթին իւր նախկին դիրքը տալու համար:

Թէհրան 5|17 փետրվարի 1894

Դրամական արժէքներ (Բորսա)

| | | | ղրան | շահի |
|---|---|---|---|---|
| Պարսկական | 20 գ. էշրէֆին | արժէ | 40 | |
| › | 10 › | › | 22 | 2 |
| › | 5 › | › | 9 | 15 |
| Ռուսական | Ոսկին (պոլին) | › | 43 | — |
| › | Մանեթ (թուղթ.) | › | 5 | 10 |
| Անգլիական | Լիրան | › | 53 | — |
| Ֆրանսիական | Ֆրանկը | › | 2 | |
| Տաճկական | Մէջիդիէն | › | 50 | 10 |

Արտօնատէր-Հրատարակիչ՝ Անդրէաս Բէկնազարեանց:

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թէհրանայ ընթերցարանաց ընկերութիւնը ինչպէս անցեալ տարի, նոյնպէս 1894 համար, հասարակութեան տրամադրութեան տակ է դնում ընթերցարանը:

Ամեն որ, ազատ է ձրիաբար գիրք եւ լրագիր ստանալու: 3—3

Ձիարշաւի շաբաթուայ ընթացքում կորսուած է մի ձեռադիտակ, անգլիական կառավարութեան կնիքի նշանով: Գտնողին կը վճարուի յիսուն ղրան պարգեւ, երբ ձեռադիտակը յանձնի խմբագրութեանս:

**LOST**

During the race week a pair of Binoculars marked with English Government stamp, finder will be rewarded with 50 krans on returning same to Editor of this paper.

Pendant les dernières courses un binocle portant la marque du gouvernement anglais, a été perdu.
On paiera 50 krs. à la personne qui l'aura trouvé et le rapportera à notre Rédaction. 3—3

Թէհրանայ հայ պատանեաց կրթական ընկերութիւնը կը ծանուցանէ բոլոր հայ ուսանողներին եւ արհեստաւորներին, որք որ կը կամին մասնակից լինել նորան ազատ են, բաց ի ընթերցարանի մասնաճիւղի անդամակցում կարող են կարդալ կանոնագրութիւնը, այս Տնօրէնին յայտնելով մասնակից լինել: Ընկերութեան նպատակն է միութիւն. պահել պատանեաց եւ երիտասարդաց մէջ օգնել միմեանց մտաւորական եւ բարոյական զարգացման եւ յաւ կարենաց օգնել բարեգործական գործոց մէջ:

Տնօրէն Աբէլ Մելքումեան

Ամեն տեսակ եւրոպական դեղեր կը գտնուին բժիշկ ԲԱԶԻԼի դեղատանումն Լալէզար փողոցում Թէհրան: Ատամի բուժմանական եւ աչքի ցաւի համար, առողջական արժէքից զիջում կը լինի: Գիշեր ժամանակում եւս դեղատունը բաց է: